

նուեցաւ. եւ իւր ժամանակը բաւական յաջող
ընթացք ունէր. թէեւ ժամանակը դժբախտ դար-
ձուած մը տուաւ անոր:

Միհրան Պէյ այսպիսի եռանդուն գործու-
նէութեամբ շատ աւելի սիրելի եղաւ Օսմանեան
Պետութեան Վեհապետին առջեւ, որ սկսաւ իւր
բարձր համարման նշանները զեղուլ անոր վրայ:
Սուլթան Ապտիւլ Մէճիտի օրով Միհրան Պէյի
առած պատուոյ շքանշաններն թուով 12 — 14
հատ են, թող պատուոյ տիտղոսներն ալ: Ապտիւլ
Ազիզ 1862 Նոյ. 1 ին Վեհ. Արքայամօր մեծ սե-
ղանաւորն ըրաւ զՄիհրան Պէյ. թէպէտ 1864
Փետրուար 5 ին այս պաշտօնն իրմէ առնուեցաւ,
բայց միայն անոր համար, որպէս զի 1870
Մարտ ամսոյն մէջ առաւել պատուով վերստին
տրուի, եւ այս առթիւ տրուեցաւ իրեն Բե-Վեյի
դուլ: 1864 Յունուար 18 ին արգարութեան
ատենին անդամակից եղաւ: Այս պատիւն պարզ
պաշտօն մը չէր, այլ մեծ նշանակութիւն ունէր,
վասն զի այս ժողովքն մինչեւ այն ատեն միայն տա-
ճիկ մեծամեծներու վերապահեալ էր, եւ Միհրան
Պէյ առաջին քրիստոնեայ անդամն եղաւ: 1867 ին
Սուլթան Ապտիւլ Ազիզին հետ Բարիզ գնաց, եւ
Համազգային դրամական Համախմբութեան՝ Օս-
մանեան Պետութեան կողմանէ Նուիրակ կարգե-
ցաւ: Իսկ 1877 ին ծերակուտի անդամ անուա-
նեցաւ:

Մինչեւ 1880 այս պաշտօններն այսպէս
չարունակուեցան, որ տարւոյ մէջ՝ փողերանոցի
վարչութիւնը Մալեյի յանձնուեցաւ: